Լոռու մարզպետի ելույթը ՀՀ և ԼՂՀ պաշտպանության նախարարությունների և Լոռու մարզպետարանի կողմից կազմակերպված միջոցառմանը

Լեռնային Ղարաբաղի պաշտպանական բանակի հարգարժան նախարար պարոն Մովսես Հակոբյան,

Սրբազան հայր,

Հայոց բանակի հարգելի սպաներ,

թանկագին զինվորներ, ծնողներ, հյուրեր:

Այսօր յուրօրինակ և սրտամոտ տոն է Լոռու մարզում: Այդ տոնը մեզ նվիրել է Արցախի պաշտպանական բանակի նախարարը և ես, բոլոր ծնողների անունից, բոլոր լոռեցիների անունից խորին շնորհակալություն եմ հայտնում աննխադեպ այս միջոցառումը նախաձեռնելու համար:

Հարգելի բարեկամներ, հնուց ի վեր հայոց օջախներում արու զավակի ծնունդը դիտվել է որպես նախախնամության պարգև և օջախի հարատևության ու շենացման գրավական: Ինչու՞ է այդպես: Որովհետև, հնուց ի վեր, դարեր ու դարեր շարունակ, հայ տղամարդը ոչ միայն մաճկալ է եղել, ոչ միայն գիտնական կամ ստեղծագործ, այլև եղել է և կա ի՛ր հայրենիքի, ի՛ր օջախի պաշտպան զինվորը: Ուստի, այսօր, առաջին հերթին ես ցանկանում եմ դիմել հայրենիքի սահմանները պաշտպանող մեր զինվորներին և ասել՝ սիրելի՛ զինվորներ, հիշեք, որ ձեր ծնողների հպարտությունը չափվում է ձե՛ր աննկուն ծառայության, և ձեր խիզախության չափով: Կուզեի, որ դուք ձեր ծառայության ամենադժվարին պահերին անգամ խորապես գիտակցեք, որ պաշտպանելով հայրենիքի սահմանները դուք պաշտպանում եք ձե՛ր ծնողներին, չէ՞ որ երկիրը մենք անվանել ենք հենց նրանց՝ մեր հոր ու մոր անունով, կոչելով՝ ՄԱ՛ՅՐ ՀԱՅՐԵՆԻ՛Ք:

Ես դիմում եմ նաև ծնողներին, որպես նրանցից մեկը, քանի որ իմ կրտսեր որդին էլ՝ իր ավագ եղբորից հետո, այժմ ծառայում է հայոց բանակում:

Թանկագին քույրեր և եղբայրներ, մեր ժողովրդի համար, հատկապես ծնողներիս համար, չկա ավելի ցանկալի ու թանկ բան, քան խաղաղ երկինքն է: Այդ խաղաղությունը մեզ պարգևում է մեր բանակի ռազմական հզորությունը և նրա անկոտրում, հաղթական ոգին: Բանակի ռազմական հզորությունը ժողովրդի աշխատանքի արդյունքով պետությունն է ապահովում, իսկ զինվորի հաղթական ոգին՝ դաստիարակվում, կոփվում է նրա

ընտանիքում: Այլ խոսքով ասած, մենք բոլորս մեր սուրբ հայրենիքի պաշտպանության ծառայության մեջ ենք՝ յուրաքանչյուրս մեր տեղում և մեր պարտականությամբ:

Այսօր, քան երբևէ, մեր սահմանները հուսալի պաշտպանված են: Այս ու այնտեղ հրադադարը խախտող հակառակորդն իր ուժն ու գերազանցությունը չէ, որ ցուցադրում է, այլ թուլությունն ու պարտվածին հատուկ վրիժառու մաղձը: Այդ նկրտումները արժանի հակահարված են ստանում:

Ի տարբերություն մեր հակառակորդների, մենք ուրիշների երկիրը հայրենիք դարձնողներ չենք, այլ մեր հայրենիքը՝ երկիր դարձնողներ: Եվ ոչ ոք թող չկասկածի, որ այսպիսի խիզախ հրամանատարներ ու զինվորներ ունեցող երկիրը, այսպիսի աշխատասեր, հայրենասեր ժողովուրդ ունեցող երկիրն անպարտելի է:

Փառք, անպարտելի հայոց բանակին:

Փառք հայոց բանակին ուժ ու կորով տվող մեր ժողովրդին: